

DOI: <https://doi.org/10.59546/18290744-2023.1-3-75>

ԱԴԵԼԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ  
*իրավաբանական գիտությունների թեկնածու,  
Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և  
քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և  
քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս*

ADELINA SARGSYAN  
*PhD in Law  
Lecturer of the Department of Criminal Law and  
Criminal Procedure Law  
Institute of Law and Politics of the Russian-Armenian University*

АДЕЛИНА САРГСЯН  
*кандидат юридических наук  
преподаватель кафедры уголовного права и  
уголовно-процессуального права  
Института права и политики Российско-Армянского университета*

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵՆՍԱԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ  
ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ  
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ**

**SOME PROBLEMS OF THE NEED FOR CRIMINAL LAW REGULATION  
OF MODERN BIOMEDICAL TECHNOLOGIES**

**НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ НЕОБХОДИМОСТИ УГОЛОВНО-  
ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ СОВРЕМЕННЫХ БИОМЕДИЦИНСКИХ  
ТЕХНОЛОГИЙ**

*Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական  
աջակցությամբ (Թեմայի ծածկագիր՝ 22YR-5E012):*

Բժշկության մեջ գիտատեխնոլոգիական առաջխաղացումը, ժամանակակից կենսաբժշկական տեխնոլոգիաները ներկայումս թույլ են տալիս դրանք օգտագործել անբուժելի հիվանդությունների բուժման նպատակով, միևնույն ժամանակ, այս ընթացակարգերի պատշաճ իրավական կարգավորման բացակայության պայմաններում անհնար է դրանց անվտանգ

և անխոչընդոտ օգտագործումը: Նշվածի կապակցությամբ կարևոր է նաև ժամանակակից կենսաբժշկական տեխնոլոգիաների քրեաիրավական կարգավորման դիտարկումը: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում նախանշված են ոչ ավանդական յատրոգեն հանցագործությունների քրեականացման որոշ ուղենիշներ, մասնավորապես, քրեական պատասխանատվություն է նախատեսված կլոնավորման և եվգենիկական փորձերի համար: Միևնույն ժամանակ, քրեաիրավական կարգավորման շրջանակից դուրս են մնացել թերապևտիկ կլոնավորման և մարդու գենոմի խմբագրման հարցերը: Հաշվի առնելով գենետիկական և գենոմային մշակումների զարգացման արագությունն ու մասշտաբների ընդլայնումը՝ նշված ոլորտի իրավական կարգավորման առարկան ենթակա է մշտական վերափոխումների<sup>1</sup>: Իհարկե, մարդու գենոմի խմբագրումը կարող է հետաքրքիր լինել բժշկության համար գենոթերապիայի համատեքստում, որը վերաբերում է մարդու գենոմի միջամտությանը՝ որոշակի հիվանդությունների բուժման նպատակով: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ խոսքը վերաբերում է այն բջիջներին միջամտելուն, որոնք չեն մասնակցում վերարտադրությանը: Այստեղից սահուն կերպով բխում են եվգենիկայի և եվգենիկական փորձերի հարցերը, որոնք իրենց ամրագրումն են գտել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը քրեական պատասխանատվություն է նախատեսում եվգենիկայի համար, այն է՝ եվգենիկական փորձեր՝ մարդու բարելավմանն (սելեկցիային) ուղղված ցանկացած գործողությունների կատարում: Քրեական իրավունքի գիտության մեջ եվգենիկ գաղափարների նկատմամբ միանշանակ վերաբերմունք չկա: Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ եվգենիկայի և դրա անթույլատրելիության մասին հիշատակումն իր արտացոլումն է գտել 2015 թվականի ՀՀ Սահմանադրության մեջ, որի 25-րդ հոդվածի համաձայն (Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք)՝ «բժշկության և կենսաբանության բնագավառում, մասնավորապես, արգելված են եվգենիկայի փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը»:

Պետք է փաստել, որ ընդհանուր առմամբ, հայկական օրենսդիրը չի պարունակում ժամանակակից կենսաբժշկական տեխնոլոգիաների համարժեք իրավական կարգավորում: Ի տարբերություն արտասահմանյան շատ երկրների օրենսդրության, ցավոք, Հայաստանի Հանրապետությունում պատշաճ մակարդակով չկա գենոմային հետազոտությունների իրավական պաշտպանություն, բացակայում են մարդու գենոմի նկատմամբ ոտնձգությունների համար քրեական պատասխանատվություն նախատեսող հատուկ հանցակազմեր:

Անհրաժեշտ է հասկանալ, թե որքանով գենոմային հետազոտություններ պետք է ստանան քրեաիրավական կարգավորում, արդյո՞ք գենոմի խմբագրումը թույլատրելի է և ինչ սահմաններում:

Այսպես, օրինակ, Ի. Յա. Կոզաչենկոն, բարձրացնելով գենետիկական արժանապատվության և ինքնության հարցը, նշում է, որ գենը, դեզօքսիդիբոնուկեինաթթուն (ԴՆԹ) և քրոմոսոմային նյութն իրենց հիմքում ցավալիորեն ընկալում են դրսից ցանկացած միջամտություն, մանավանդ, եթե այդ միջամտությունը կարող է ոչնչացնել կամ չեզոքացնել նրանց բնական վիճակը, ինչը կարող է հանգեցնել ամենատարբեր բնույթի անկանխատեսելի հետևանքների<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Juan Antonio Travieso, Angelo Vigliani Ferraro, Elena Trikoz, Elena Gulyaeva. BIOETHICAL ASPECTS OF THE INSTITUTION OF HUMAN RIGHTS IN LATIN AMERICA // Racionalidad, Derecho Y Ciudadanía [livro eletrônico] / Organización Ricardo Mauricio Freire Soares... [et al.]. Salvador, BA: Direito Levado a Serio, 2021 թ., էջ 89:

<sup>2</sup> Տե՛ս Болков М.А., Козаченко И.Я., Ларионов П.А. [и др.] Генетические исследования: законодательство и уголов-

Ինչո՞ւ կոնկրետ ինչ-որ մեկին սպանել, երբ գենային ինժեներիայի միջոցով կարելի է հասնել ոչնչացման՝ մի ամբողջ սոցիալական խմբի «դեգեներացիայի» միջոցով<sup>3</sup>: Նշվածի կապակցությամբ լայն ուշադրության են արժանի գիտնականի դատողությունները գենոմի ապօրինի խմբագրմանն ուղղված գործողությունների համար քրեական պատասխանատվություն սահմանելու անհրաժեշտության մասին<sup>4</sup>: Նա նշել է մարդու գենետիկական արժանապատվության պատշաճ քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտության մասին՝ նշելով, որ արարքի հասարակական վտանգը զգալիորեն մեծանում է, եթե տուժողի արժանապատվության նվաստացումն իրականացվում է հանցագործի կողմից գենետիկ մանիպուլյացիաների միջոցով (գենետիկ արժանապատվություն)<sup>5</sup>: Այս մտքերը, անշուշտ, արժանի են ուշադրության, քանի որ մենք խոսում ենք խնդրի էթիկական կողմի մասին: Այնուամենայնիվ, միևնույն ժամանակ, թույլ կտանք մեզ չհամաձայնել Ի. Յա. Կոզաչենկոյի տեսակետի հետ, քանի որ, կարծում ենք, կարելի է խոսել գենոմի խմբագրման թույլատրելի սահմանների մասին (բացառապես թերապետիվիկ նպատակներով), սակայն, պատշաճ իրավական ապահովման պայմաններում, ներառյալ քրեաիրավական: Ներկայում, չնայած առկա բազմաթիվ զարգացումներին, այնուամենայնիվ, մարդկությունը լիովին պատրաստ չէ լիարժեք իրականացնել այնպիսի կենսաբժշկական տեխնոլոգիա, ինչպիսին է գենոմի խմբագրումը, որը, այսօր, այնուամենայնիվ, բժշկական փորձի բնույթ է կրում, որը կարող է տալ ինչպես դրական, այնպես էլ բացասական արդյունք: Ըստ Վ. Վ. Ֆեդորինի «Մարդու գենոմի խմբագրման զարգացումը կհանգեցնի «կիսա-մարդկանց» առաջացմանը: Գենետիկական կառուցումը թույլ չի տալիս անձի ձևավորումը բազմաբնույթի փիլիսոփայական իմաստով: Հասարակությունը կարող է բաժանվել նրանց, ում մենք բոլորս սովոր ենք, և նրանց, ում արհեստական ճանապարհով են գեներացրել: Այս տեսակի տեխնոլոգիան ծնողների չարաշահման վտանգ է ներկայացնում, ովքեր երագում են, որ իրենց երեխան հատուկ տեսք ունենա կամ իր ֆիզիոլոգիական հատկություններով հնարավորություն ունենա ընտրել այնպիսի մասնագիտություն, որին ի վիճակի չէ ծնողը»<sup>6</sup>: Սակայն գենոմի խմբագրման բարի նպատակը բնավ չի հավակնում ոտնահարել մարդու էվոլյուցիայի հիմքերը, նրա ինքնությունն ու փիլիսոփայական հիմքերը, այլ միայն նպատակ է հետապնդում նպաստել բարձր տեխնոլոգիական բժշկական օգնություն ստանալու մարդու իրավունքի իրացմանը:

Գենոմային խմբագրման տեխնոլոգիան առաջընթաց է ժամանակակից գիտության մեջ, սոցիալական անհավասարության և խտրականության նոր տեսակ, թե՛ մարդկության էվոլյուցիայի վերաբերյալ հիմնական հիմքերի և պատկերացումների ոտնահարում: Հարցը միջդիսցիպլինար բնույթ է կրում՝ իր մեջ ներառելով բժշկագենետիկական, բիոէթիկական և իրավական ասպեկտները: Սակայն, այնուամենայնիվ, հեռանկարում դիտվում է մարդու գենոմի և սաղմի խմբագրման արգելքը թերապևտիկ նպատակներով հանելու հեռավոր հնարավորու-

ная политика: коллективная монография / под. ред. д-ра юрид. наук, проф. И. Я. Козаченко, канд. юрид. наук Д.Н. Сергеева. — Екатеринбург : Лаборатория SAPIENTIA, 2021 թ., էջ 164:

<sup>3</sup> Տե՛ս *Ткачев И.О.*, Уголовно-правовая охрана жизни: от человеческого эмбриона к генетическому благополучию // *Виктимология*. 2020 թ., № 3 (25), էջ 18:

<sup>4</sup> Տե՛ս *Генетические исследования: законодательство и уголовная политика: коллективная монография / М.А. Болков, И.Я. Козаченко, П.А. Ларионов [и др.]; под. ред. д-ра юрид. наук, проф. И. Я. Козаченко, канд. юрид. наук Д.Н. Сергеева.* — Екатеринбург: Лаборатория SAPIENTIA., 2019 թ., էջ 136:

<sup>5</sup> Տե՛ս *Козаченко И. Я., Мелюханова Е. Е.*, Об обусловленности уголовно-правовой охраны генетического достоинства // *Всероссийский криминологический журнал*. 2021 թ., № 4, էջ 42:

<sup>6</sup> Տե՛ս *Федорин В.В.*, Философско-методологический анализ проектов генетического конструирования человека: автореф. дис. ... канд. философ. наук. М., 2017 թ., էջ 8:

թյուն:

Գենոմային հետազոտությունների ոլորտում հիմնարար միջազգային իրավական ակտ է հանդիսանում կենսաբանության և բժշկության նվաճումների կիրառման հետ կապված Մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին կոնվենցիան, որի 13-րդ հոդվածի համաձայն «Մարդու գենոմի միջամտությունը, որն ուղղված է դրա փոփոխմանը, կարող է իրականացվել միայն կանխարգելիչ, ախտորոշիչ կամ բուժական նպատակներով և միայն այն պայմանով, որ այն ուղղված չէ տվյալ անձի ժառանգների գենոմի փոփոխմանը»: Այսպիսով, թերապևտիկ նպատակներով մարդու գենոմի խմբագրման թույլտվության և դրա օրենսդրական կարգավորման պայմաններում անհրաժեշտ է նաև նախատեսել օրենսդրական մեխանիզմներ այս ընթացակարգի անվտանգության ապահովման և դրանց խախտման համար իրավական (քրեաիրավական) պատասխանատվության ապահովման համար: Պետք է նաև ուսումնասիրել սաղմի գենոմի խմբագրման հնարավորության հարցը, հատկապես վերջինիս իրավական կարգավիճակի վերաբերյալ միասնականության բացակայության պայմաններում:

Միանգամայն հնարավոր են իրավիճակներ, երբ անձը կատարում է համապատասխան ազգային օրենսդրությամբ արգելված արարք, բայց չի ճանաչվում որպես հանցավոր և չի առաջացնում քրեական պատասխանատվություն: Նման բանի աշխարհը բախվել է 2018 թվականին, երբ SUSTech հարավային գիտատեխնիկական համալսարանի պրոֆեսոր Հե Յզյանքույան արհեստական բեղմնավորման ընթացակարգից առաջ մարդկային սաղմերի գենոմի խմբագրման ընթացակարգ է իրականացրել՝ դրանով իսկ փոխելով երկու նորածին երկվորյակների ԴՆԹ-ն:

Չինացի գիտնականներն ու իրավակիրառները կատարվածին տարբեր իրավական գնահատական են տվել՝ անօրինական բժշկական գործունեություն, փաստաթղթերի կեղծում կամ խարդախություն<sup>7</sup>: Չինացի գիտնականների խումբն այդպիսով կատարել է CCR5 գենի նպատակային անջատում, որը որոշիչ դեր ունի մարդու իմունային անբավարարության վիրուսով բջիջների վարակման գործում: Գենի ուղղորդված անջատումը կատարվել է ռեկոմբինացիայի գործընթացում ԴՆԹ-ի վեկտորի միջոցով քրոմոսոմում CCR5-D32 գենի մուտացիայի ներդրման միջոցով<sup>8</sup>: Այս մուտացիան հանգեցնում է վիրուսի T բջիջին միանալու անհնարինության<sup>9</sup>:

Այս արարքի պատշաճ օրենսդրական կարգավորման բացակայության պայմաններում մենք չենք կարող խոսել չինացի գիտնականի արարքի հակաօրինականության հատկանիշի մասին:

Հաշվի առնելով գենային թերապիայի հնարավոր դրական հնարավորությունները, ինչպես նաև առկա պրակտիկայի օրինակների վերլուծությունը, այնուամենայնիվ, կարելի է խոսել մարդու գենոմի խմբագրման հնարավորության մասին: Այսպիսով, օրինակ, Չիկագոյի վերարտադրողական գենետիկայի ինստիտուտում աշխատող դոկտոր Յու Վերլինսկու գլխավորած խումբը ապահովեց երեխայի բեղմնավորումը, որը զերծ է քաղցկեղ առաջացնող գենից:

<sup>7</sup> Sեն *Sergeev D.H.*, Ответственность за манипуляции с геномом человека (дело Хэ Цзянькуя) // Электронное приложение к Российскому юридическому журналу, 2019 թ., № 5, էջ 5:

<sup>8</sup> Sեն *Sergeev D.H.*, Ответственность за манипуляции с геномом человека (дело Хэ Цзянькуя) // Электронное приложение к Российскому юридическому журналу, 2019 թ., № 5, էջ 6:

<sup>9</sup> Sեն *Allers K., Schneider Th.* CCR5A32 mutation and HIV infection: basis for curative HIV therapy // Current Opinion in Virology, 2015 թ., Vol. 14, էջ 24:

Այս գենը երեխան կարող էր ժառանգել իր հորից, որը նախատրամադրված էր ուռուցքային հիվանդությունների զարգացմանը (այսպես կոչված լի-Ֆրոմենի համախտանիշ, որն առաջացել է p53 գենի մուտացիայի պատճառով)<sup>10</sup>: Այսպիսով, թերապևտիկ նպատակներով մարդու գենոմի միջամտությունը նպատակահարմար է թվում: Միևնույն ժամանակ, եվգենիկ պատկերացումների համատեքստում, անկասկած, բացասական է մարդու գենոմի ցանկացած միջամտություն, օրինակ՝ երեխաներին պլանավորված կամ ցանկալի գենոտիպ «արտադրելու» նպատակով («սաղմերի արհեստական ընտրություն»): Այս պահին ծնողների «պատվերով» գենոտիպով երեխաներ ծնելու նպատակով գենետիկ մանիպուլյացիայի հնարավորությունը շատ հեռու է թվում, սակայն նման հեռանկար կա և, մեր կարծիքով, պետք է համարժեք արձագանք ստանա նաև քրեաիրավական մակարդակում:

Մեկ այլ կարևոր ուղղություն է կլոնավորման քրեաբանական և քրեաիրավական կանխարգելումը, ինչպես նաև ձվաբջիջների, սպերմատոզոիդների հետ կապված այլ մանիպուլյացիաները, հարկադիր բեղմնավորումը և սաղմնային ցողունային բջիջների օգտագործումը:

Հաշվի առնելով սոցիալական վտանգի բարձրացումը՝ սաղմի և սաղմնային ցողունային բջիջների հետ կապված տարբեր հանցավոր մանիպուլյացիաների քողարկված բնույթը, հնարավոր ենք համարում նախատեսել ինքնուրույն հանցակազմ, որը կարգավորում է քրեական պատասխանատվությունը մարդու սաղմնային բջիջների ապօրինի վերցնելու համար՝ դրանց հետագա օգտագործման համար բժշկության և էսթետիկ բժշկության մեջ (կոսմետոլոգիա), հանցավոր նպատակներով սաղմի ստեղծման համար և այլն: Կամ էլ խոսքը կարող է գնալ նույն նպատակներով աբորտի կատարման մասին: Այսպիսով, հիմնական խնդիրը հանգում է աբորտային նյութի հետագա հանցավոր օգտագործմանը: Վ. Ս. Օվչինսկին պնդում է, որ մաֆիոզ բիզնեսի տեսակներից մեկը, որը կծաղկի (և արդեն ծաղկում է), քրեական և ոչ քրեական աբորտների արդյունաբերությունն է՝ սաղմերը ցողունային բջիջների հետ փորձեր կատարելու համար օգտագործելու համար: Նման փաստերը տեղի են ունեցել Ռուսաստանում, դրանք ստուգվել են իրավապահ մարմինների կողմից, բայց չեն գտել համապատասխան իրավական լուծում՝ քրեական օրենսդրության համապատասխան նորմերի բացակայության պատճառով<sup>11</sup>:

Մարդու իրավունքների եւ մարդկային արժանապատվության պաշտպանության մասին 1996 թ. կենսաբանության և բժշկության նվաճումների կիրառման հետ կապված կոնվենցիայում (Եվրոպայի խորհուրդ) 18-րդ հոդվածում նշվում է, որ «Եթե օրենքը թույլ է տալիս հետազոտություններ անցկացնել in vitro սաղմերի վրա, ապա այն պետք է նախատեսի այդ սաղմի պատշաճ պաշտպանությունը: Մարդու սաղմերի ստեղծումը հետազոտական նպատակներով արգելվում է»: Միևնույն ժամանակ, Կոնվենցիան չի պարունակում թերապևտիկ կլոնավորման նպատակով սաղմերի օգտագործման հնարավորության ուղղակի հիշատակում (արգելք կամ թույլտվություն): Նշվածի առնչությամբ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում քրեական պատասխանատվություն է սահմանվում միայն վերարտադրողական կլոնավորման համար: Ի տարբերություն վերարտադրողական թերապևտիկ կլոնավորումը ենթադրում է սաղմի զարգացում մինչև բլաստոցիստի փուլ (մինչև 14 օր), այնուհետև դրա աճը դադարեցվում է: Սաղմն օգտագործվում է ցողունային բջիջներ ստանալու համար՝ բժշկության մեջ դրանց հետագա բուժական օգտագործման նպատակով, այսինքն՝

<sup>10</sup> Տե՛ս *Захаров И.А.*, ГенЭтика или Рожать нельзя клонировать. - Новосибирск: Изд-во СО РАН, 2003 թ., էջ 45:

<sup>11</sup> Տե՛ս *Овчинский В.С.*, Криминология и биотехнологии, М., 2005 թ., էջ 63:

տարբեր հիվանդությունների բուժման և կանխարգելման համար<sup>12</sup>: «Մարդու կլոնավորված սաղմերի վրա հիմնված ցողունային բջիջների գծերի արտադրությունն առաջարկվել է որպես դեղամիջոցների, ախտորոշիչ մեթոդների և բջիջների և հյուսվածքների փոխպատվաստման մշակումն ու գնահատումն արագացնելու միջոցներից մեկը: Այն հարցը, թե արդյո՞ք մարդու սաղմի ցողունային բջիջները (համեմատած մեծահասակից վերցված հյուսվածքների ցողունային բջիջների հետ) բուժման միակ հեռանկարային միջոցն են, և եթե այո, արդյո՞ք կլոնավորված սաղմերի ստեղծումը, որպես ցողունային բջիջների աղբյուր, նրանց ավելի մեծ թերապևտիկ արժեք կտա, ներկայումս գիտական հետազոտությունների առարկա է»<sup>13</sup>: Մարդու կլոնավորման հարցի վերաբերյալ Ն. Ե. Կոլիլովան առաջարկում է քրեական պատասխանատվություն սահմանել մարդու կլոնավորման, մարդու կլոնավորված սաղմերի ներմուծման կամ արտահանման<sup>14</sup>:

Հաշվի առնելով տվյալ հարցի գործող կարգավորումները Հայաստանի Հանրապետությունում՝ միևնույն ժամանակ հարկ է նշել, որ թերապևտիկ կլոնավորման հարցը օրենսդրական մակարդակով լուծվել է ոչ համակարգային և ոչ բավարար: Նախ, բացակայում է ՀՀ-ում թերապևտիկ կլոնավորման մասին օրենքը, որը կանոնակարգում է դրա հասկացությունը, անցկացման կարգը, ընթացակարգը և այլ հարցեր: Երկրորդ, առնվազն նպատակահարմար կլիներ նշված օրենքի ընդունման պայմաններում բլանկետային դիսպոզիցիայով հանցակազմի կառուցումը, որը քրեական պատասխանատվություն է նախատեսում թերապևտիկ կլոնավորման անցկացման սահմանված կարգի խախտման համար: Այդ քրեաիրավական նորմի նախատեսումը հետագայում պատշաճ քրեաիրավական գնահատական կտար մարդու թերապևտիկ կլոնավորման ժամանակ կատարվող այլ (դասական, ավանդական) յատրոգեն հանցագործություններին: Միևնույն ժամանակ, թույլ տանք մեզ չհամաձայնել հայկական օրենսդրի մոտեցման և կլոնավորման հարցերի գործող օրենսդրական կարգավորման հետ: Նշելով վերարտադրողական կլոնավորման համար քրեական պատասխանատվություն նախատեսելու անվերապահ նշանակությունը, միևնույն ժամանակ, սխալ ենք համարում քրեաիրավական պաշտպանության շրջանակներից դուրս թողնել թերապևտիկ կլոնավորումը, որը, մեր կարծիքով, հակասում է ընդհանուր ընդունված բարոյական և էթիկական համոզմունքներին, իրենից ներկայացնում է «ինչ-որ բանի» արհեստական սկիզբ՝ դրա նպատակի և բնական տեսքով դրա «շարունակության» բացակայության կանխամտածված գիտակցմամբ:

Թերապևտիկ կլոնավորումը պարունակում է բազմաթիվ քրեածին ռիսկեր, որոնք բաղկացած են այն փաստից, որ բուժաշխատողները, թերապևտիկ նպատակներով «կլոնավորման» պատրվակով (օրենսդրական մակարդակում դրա թույլտվության պայմաններում), կգրադվեն անձի, նրա օրգանների և հյուսվածքների կլոնավորմամբ կրիմինալ նպատակներով: Այսպիսով, ստացվում է, որ թերապևտիկ կլոնավորումը, որի հիմնական նպատակը պացիենտների բուժումն է (մասնավորապես՝ հիվանդ օրգանների փոխարինման կատարումը), իրականում կարող է հանգեցնել կլոնավորման միջոցով ձեռք բերված մարդու օրգանների և հյուսվածքների ապօրինի շրջանառության: Հատուկ վտանգ է ներկայացնում մարդու սաղմի կլոնավորման

<sup>12</sup> Տե՛ս *Гурылёва М.Э.*, Этико-правовые проблемы клонирования человека // Казанский медицинский журнал. – 2019 թ., Том 100, № 6, էջ 993:

<sup>13</sup> Տե՛ս *Репродуктивное клонирование людей: состояние дискуссий на Генеральной Ассамблее Организации Объединенных Наций*, 2018 թ., Режим доступа: [http://apps.who.int/gb/archive/pdf\\_files/EB115/B115\\_ID2-ru.pdf](http://apps.who.int/gb/archive/pdf_files/EB115/B115_ID2-ru.pdf). էջ 4:

<sup>14</sup> Տե՛ս *Крылова Н.Е.*, Уголовное право и биоэтика (уголовно-правовые проблемы применения современных биомедицинских технологий): автореф. дис. ... д-ра юрид. Наук: 12.00.08/ Крылова Н. Е., Москва, 2006 թ., էջ 51:

հնարավորությունը ապօրինի շրջանառության կամ տարբեր մանիպուլյացիաների իրականացման նպատակով, ինչը նույնպես պահանջում է, մեր կարծիքով, քրեականացում:

Սաղմի իրավական կարգավիճակի հարցը, ցավոք, օրենսդրական հստակ կարգավորում չի գտել: Նշվածի կապակցությամբ հարկ է նշել, որ, մեր կարծիքով, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում որոշակի նախադրյալներ են դրված սաղմին իրավական կարգավիճակ տալու համար: Մասնավորապես, խոսքը ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի մասին է, որը քրեական պատասխանատվություն է նախատեսում բուժաշխատողի կողմից իր մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, որն անզգուշությամբ առաջացրել է սաղմի կամ պտղի վնասում: Միևնույն ժամանակ, «սաղմի» հասկացության առկա սահմանումների բազմազանության պայմաններում ներկայումս բացակայում է դրա օրենսդրական սահմանումը: Այս առումով հետաքրքիր է թվում որոշ արտասահմանյան երկրների փորձը: Մասնավորապես, Կորեայի Հանրապետության Բիոէթիկայի եւ անվտանգության մասին օրենքը նախատեսել է մի շարք առանցքային տերմիններ գենետիկական հետազոտությունների ճյուղի կարգավորման համար, ինչպիսիք են, օրինակ, «սաղմը», «գենային թերապիան», «սոմատիկ բջջի միջուկի տեղափոխումը», ինչպես նաև ամրագրել է այն դրույթները, որոնց համաձայն՝ սաղմերն արգելվում է արտադրել որեւէ նպատակով, բացի երեխաների ծնունդից<sup>15</sup>: Ճապոնիայում մարդու գենոմի ժառանգական գծերի մոդիֆիկացիայի նորմատիվ-իրավական կարգավորման ոլորտը կարգավորվում է մեկ հիմնարար օրենքով՝ 2000 թվականին ընդունված մարդու կլոնավորման տեխնոլոգիաների կարգավորման ակտով (Act on Regulation of Human Cloning Techniques), «Մարդու սաղմերի հետ վարվելու հիմնական քաղաքականությունը» (Fundamental Policy Regarding Handling of Human Embryos) փաստաթղթով, որը 2004 թվականին հրատարակվել է Ճապոնիայի նախարարների կաբինետի վարչակազմի գիտական եւ տեխնոլոգիական քաղաքականության խորհրդի կողմից:

Գենոմի փոփոխման հնարավորության հարցի շուրջ ակտիվ քննարկումները կապված են այն մտավախության հետ, որ գենոմի խմբագրման հնարավորության ի հայտ գալուն պես դա ինքնաբերաբար կհանգեցնի որոշակի գենոտիպ ունեցող մարդկանց վերարտադրության նպատակ հետապնդող եվգենիկ գաղափարների իրականացմանը: Իսկապես, այսօր մարդու գենոմի խմբագրման հարցերի իրավական կարգավորումը, և առաջին հերթին այն փոփոխությունները, որոնք ժառանգները կարող են ժառանգել, ավելի կարևոր է, քան երբևէ<sup>16</sup>: Կենսաբանության և բժշկության նվաճումների կիրառման հետ կապված մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդու գենոմի միջամտությունը, որն ուղղված է դրա փոփոխմանը, կարող է իրականացվել միայն կանխարգելիչ, ախտորոշիչ կամ բուժական նպատակներով և միայն այն պայմանով, որ այն ուղղված չէ տվյալ մարդու ժառանգների գենոմի փոփոխմանը»:

Այլ կերպ ասած, գենային թերապիայի միջոցով փոփոխվում են սոմատիկ բջիջները, այլ ոչ թե սաղմնային բջիջները, որպեսզի խուսափեն գենետիկորեն ձևափոխված ԴՆԹ-ի փոխանցումից հաջորդ սերունդներին: Սակայն, կրկին, «տվյալ անձի ժառանգների գենոմի փո-

<sup>15</sup> Տե՛ս Kim H., Joly J., The regulation of human germline genome modification in the Republic of Korea // Human germline genome modification and the right to science. A comparative study of national laws and policies / ed. by Boggio A., Romano C.P.R. Almqvist J. - Cambridge, 2020 թ., էջ 512:

<sup>16</sup> Տե՛ս Калинин П.А., Косилкин С.В., Геномные исследования: стандарты Совета Европы и правовое регулирование в России // Вестник университета им. О.Е. Кутафина, 2019 թ., էջ 112:

փոխության» առկա սահմանափակման կապակցությամբ առաջին պլան են մղվում առկա ժառանգական հիվանդությունները, ինչի հետևանքով նշված սահմանափակումը կասկածելի է թվում: Վերոնշյալ համատեքստում գենոմի խմբագրման դրական կողմը ընդունելու տեսանկյունից կարելի է մատնանշել այնպիսի հիվանդությունների կանխարգելման հնարավորությունը, ինչպիսիք են Դաունի համախտանիշը, հեմոֆիլիան, միոտոնիկ դիստոնիան և այլն: Այսպիսով, շոշափվում է սոմատիկ գենային թերապիայի և սաղմնային գծի հարցը: «Մարդու գենոմի խմբագրման հնարավոր առավելությունները կայանում են ավելի արագ և ճշգրիտ ախտորոշման, ինչպես նաև գենետիկական խանգարումների արդյունավետ բուժման և կանխարգելման հնարավորության մեջ: Սոմատիկ գենային թերապիան, որը թույլ է տալիս փոխել հիվանդի ԴԽԹ-ն, նախկինում հաջողությամբ օգտագործվել է ՄԻԱՎ-ի և այլ լուրջ հիվանդությունների բուժման համար: Հեռանկարում այս հեղափոխական մեթոդը կարող է նաև զգալիորեն բարելավել քաղցկեղի տարբեր տեսակների բուժման արդյունավետությունը: Գենետիկական փոփոխությունները կարող են փոխանցվել հաջորդ սերունդներին՝ փոփոխելով սերունդների ֆիզիոլոգիական առանձնահատկությունները<sup>17</sup>»: Հաշվի առնելով քննարկվող հարցի կարևորությունը՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) 2018 թվականի դեկտեմբերին ստեղծեց փորձագետների գլոբալ բազմամասնագիտական Խորհրդատվական կոմիտե՝ ուսումնասիրելու մարդու գենոմի (ինչպես սոմատիկ, այնպես էլ սաղմնային) խմբագրման հետ կապված գիտական, էթիկական, սոցիալական և իրավական խնդիրները:

Պետք է նշել, որ արտասահմանյան երկրներում կարելի է նկատել մարդու սաղմնային գծի գենետիկական խմբագրման տարբեր մոտեցումներ, որոնց մի մասը պարունակում է նման մանիպուլյացիաների ուղղակի արգելքներ, իսկ մյուս մասը դրանք թույլ է տալիս միայն բուժական, կանխարգելիչ և ախտորոշիչ նպատակներով, այնուամենայնիվ, պայմանով, որ մարդու սաղմնային գծի փոփոխությունը նպատակ չէ հանդիսանում: Այսպիսով, Լիտվայի Հանրապետության «էթիկայի և կենսաբժշկական հետազոտությունների մասին» օրենքը նախատեսում է, որ «Մարդու կլոնավորումն արգելված է. և կենսաբժշկական հետազոտությունները, որոնք փոխում են մարդու գենոմը, կարող են իրականացվել միայն կանխարգելման, ախտորոշման կամ բուժման նպատակով և միայն այն դեպքերում, երբ դրանք նախատեսված չեն սերունդների գենոմը փոխելու համար (սաղմնային գիծ)»<sup>18</sup>: Պորտուգալիայի «Անձնական գենետիկական և առողջապահական տեղեկատվության մասին» օրենքը արգելում է մարդու սաղմնային գծի փոփոխությունը<sup>19</sup>: Նման սահմանափակում կա նաև Մալթայի «Սաղմի պաշտպանության մասին ակտում»:<sup>20</sup>

Ամփոփելով կատարված ուսումնասիրության արդյունքները՝ պետք է փաստել, որ ներկայումս չկա պատշաճ քրեաիրավական հիմք մարդու գենոմի դեմ հանցավոր ոտնձգությունների դեմ պայքարի համար: Մարդու սաղմի իրավական անորոշության պատճառով բացակայում է նաև նրա պատշաճ քրեաիրավական պաշտպանությունը: Վերջինիս իրավական կարգավիճակ տալու որոշակի սկիզբ ձեռնարկվել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունում, որը որպես այլ հանցագործությունների հանրորեն վտանգավոր հնարավոր հետևանք նախատեսել է սաղմի կամ պտղի անզգույշ վնասում: Նշելով հայկական օրենս-

<sup>17</sup> Տե՛ս URL: <https://news.un.org/ru/story/2021/07/1406242> (дата обращения: 10.03.2023)

<sup>18</sup> Տե՛ս The Law on Ethics in Biomedical Research (2002) «Закон об этике в биомедицинских исследованиях»:

<sup>19</sup> Տե՛ս The Law no 12/2015 of 26 January on Personal Genetic Information and Health Information:

<sup>20</sup> Տե՛ս The Embryo Protection Act (2013) «Акт о защите эмбриона»:



դիրի դրական քայլը մարդու վերարտադրողական կլոնավորման համար քրեական պատասխանատվությունն ամրագրելու առումով, մինչույն ժամանակ հաշվի առնելով հնարավոր քրեածին ռիսկերը, անհրաժեշտ ենք համարում նմանատիպ հանցակազմի նախատեսումը նաև թերապևտիկ կլոնավորման դեպքում: Բացի դրանից, նշելով մարդու գենոմի բուժական խմբագրման օգտակար նպատակի և գործնականում դրա կիրառման հնարավորության մասին, մինչույն ժամանակ, առաջարկվում է նախատեսել ինքնուրույն հանցակազմ, որը քրեական պատասխանատվություն է նախատեսում գենոմի խմբագրման կարգը խախտելու համար, ինչպես նաև դրա կատարումը՝ մարդու սաղմնային գիծը փոխելու համար:

**Annotation.** Scientific and technological breakthrough, improvement of medical care technologies, processes of genetic engineering and other biomedical technologies require proper legal, including criminal law regulation. Of course, many potentially socially dangerous acts in these areas have not found their actual manifestation to date, but this does not mean that they do not require criminal legal regulation. After all, several decades ago, with the same success, the world community did not even assume about such negative phenomena as cybercrime, in particular, cyberterrorism, cyberterrorism, phishing, etc., while today the efforts of many states are aimed precisely at criminal legal counteraction to the noted illegal encroachments. In the absence of a definition of the concept of “iatrogeny” and “iatrogenic crimes” at the legislative level, the issues of classification of iatrogenic crimes are widely discussed in scientific circles. Most authors refer to them only traditional iatrogenic crimes, at the same time, we defend the position regarding the attribution of non-traditional iatrogenic crimes to them, which have no less degree of public danger. The issues of genomic research are relevant primarily due to the fact that they are at the intersection of ethics and law. To date, such issues as editing, modification of the human genome, the legal status of the human embryo and its criminal protection, new reproductive technologies are on the agenda. The development of biomedical technologies actualizes the issue of their proper legislative regulation, criminalization of potential socially dangerous acts in the areas under consideration and identification of criminal law problems in the application of modern biomedical technologies.

**Аннотация.** Научно-технологический прорыв, совершенствование технологий оказания медицинской помощи, процессы геномной инженерии и иных биомедицинских технологий требуют надлежащего правового, в том числе, уголовно-правового регулирования. Безусловно, многие потенциально общественно опасные деяния в данных сферах на сегодняшний день не нашли своего фактического проявления, однако это отнюдь не означает, что они не требуют уголовно-правовой регламентации. Ведь несколько десятков лет назад с той же успешностью мировое сообщество и не предполагало о таких негативных явлениях, как киберпреступность, в частности, кибертерроризм, фишинг и т.д., в то время как на сегодняшний день усилия многих государств направлены именно на уголовно-правовое противодействие отмеченным противоправным посягательствам. В условиях отсутствия на законодательном уровне определения понятия «ятрогения» и «ятрогенные преступления» в научных кругах широко дискутируются вопросы классификации ятрогенных преступлений. Большинство авторов относит к ним лишь традиционные ятрогенные преступления, в то же время, нами отстаивается позиция относительно отнесения к ним и нетрадиционных ятрогенных преступлений, обладающих отнюдь не меньшей степенью общественной опасности. Вопросы проведения геномных исследований представляют актуальность в первую очередь в силу того, что они находятся на стыке этики и права. На сегодняшний день в повестке дня такие вопросы, как редактирование, модификация генома человека, правовой статус человеческого эмбриона и его уголовно-правовая защищенность, новые репродуктивные технологии. Развитие биомедицинских технологий актуализирует вопрос их надлежащего законодательного регулирования, криминализации потенциальных общественно-опасных деяний в рассматриваемых сферах и выявления уголовно-правовых проблем в применении современных биомедицинских технологий.

**Բանալի բառեր** - կենսաբժշկական տեխնոլոգիաներ, քրեաիրավական պաշտպանություն, վերարտադրողական կլոնավորում, թերապևտիկ կլոնավորում, սաղմ, գենոմի խմբագրում:

**Keywords:** *biomedical technologies, criminal law protection, reproductive cloning, therapeutic cloning, embryo, genome editing.*

**Ключевые слова:** *биомедицинские технологии, уголовно-правовая охрана, репродуктивное клонирование, терапевтическое клонирование, эмбрион, редактирование генома.*

**Սարգսյան Ա.** - իրավաբանական գիտությունների թեկնածու, Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս, էլ. հասցե՝ [adelina-sargsyan@mail.ru](mailto:adelina-sargsyan@mail.ru):

Ներկայացվել է խմբագրություն 28.03.2023 թ., տրվել է գրախոսության 28.03.2023 թ., երաշխավորվել է ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր, Հայ-Ռուսական համալսարանի պրոֆեսոր Ս. Ս. Ավետիսյանի կողմից, ընդունվել է տպագրության 19.04.2023 թ.: